

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

(Ծննդյան 80-ամյակի առիթով)

Պրոֆ. Վ. Զ. ՊԱՐՏԻՉՈՒՆԻ

«Հորելյանական տոներին,—ասել է Հովհ. Թումանյանը,—ամեն մի ժողովուրդ՝ հանձին հորելյարի, զալիս է հարգելու, պսակելու ինքն իրեն, իր շնորհքը, իր մտավոր-հոգեկան ուժերը, ուժեր, որ ընդունակ լինեին պատկառանք ներշնչելու ոչ միայն ազգի ընդհանրությանը, այլև օտարին» (Թումանյանի քննադատ», 1939, էջ 176)։ Այդ տեսակետից դժվար է գերազնահատել ինչպես այս հորելյանի նշանակությունը, այնպես էլ հորելյարի դերը։ Տերյանը ոչ միայն ազգային օրինական հպարտության ու սեփական ժողովրդի նկատմամբ պատկառանքի ազնիվ զգացումներ է առաջացնում, այլև մեզ իրավունք է տալիս բացճակատ ներկայանալ աշխարհին<sup>\*</sup>։

Սարգու հոգեկան աշխարհի անսահման գեղեցկության, մարդկային զգացմունքների անսպառ հարստության իր անթառամ երգերով Տերյանը ոչ միայն մեր գրականության ամենամեծ, ամենապայծառ ու ամենախնքնատիպ դեմքերից է, տյլև ամենից նվիրական, ամենից հարազատ և ամենից ջերմորեն սիրված պոետներից։ Նրա պոեզիան ոչ միայն պատկառանք ու հիացում է պատճառում, այլև հարազատ, մտերիմ ու ջերմ զգացումներ առաջացնում։ Տերյանի բանաստեղծությունները ձեռք ես վերցնում ոչ թե պատգամներ ու խրատներ քաղելու, այլ մարդկային մտերիմ ու նվիրական զգացմունքներ վերապրելու, հաղազատի հետ հաղորդակցվելու։

Ասում են բնության մեջ կան բաներ, որոնց մասին մեղք է նվաստ արձակով խոսելու։ Իսկապես, ինչպե՞ս մեկնաբանել Տերյանին, մեր ամենից սիրված, զգացված ու ապրված բանաստեղծներից մեկին, որը ընթերցողի հետ անմիջական կապի մեջ է մտնում, վարակում, տրամադրում և կարծեք քննադատ-թարգմանչի դերը ավելորդ դարձնում։ Դժվար է, բայց ոչ անհնար։

1917 թ. հունվարին Տերյանը եղել է Երևանում, դասախոսություն է կարդացել «Հայոց նոր շրջանի բանաստեղծության ոճի և լեզվի զարգացման մասին» ու մոտալուտ մահվան զգացումը սրտում արտասանել է իր կախարդական «Հրաժեշտի գազելը»։

Գնում եմ ես մի մուր աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու.  
Բարի ճիշդ ինձ ձեր սրտում, մեա՛մ բառով, մեա՛մ բառով։

«Բարի հիշեք ինձ ձեր սրտում...»։ Որքա՞ն քիչ բան է ուզում բանաստեղծը իր տված անկշռելի հարստության փոխարեն։ Դրանից հետո Տերյանը

\* Հոդվածի հիմքում ընկել է 1965 թ. ապրիլի 9-ին Տերյանի ծննդյան 80-ամյակին նվիրված հորելյանական հանդիսավոր նիստում կարդացված գեկուցումը։

միայն երեք տարի ապրեց: 1920 թ. հունվարին նա վախճանվեց հեռավոր Սրենբուրգում:

Վաղուց հետե մարդը բախտը կույր է համարել: Իսկապես կույր բախտ, որ չգիտե ո՛ւմ ի՞նչ է տալիս: Հանճարասպան ստահակ մի 'Իանտես ապրում է 83 տարի, Լերմոնտովը՝ 26, Դուրյանը՝ 20, Մեծարենցը՝ 22, Տերյանը՝ 35: Հայ ժողովրդի ծանր ճակատագրին կարծեք համապատասխանում է (երբեմն ուղղակի կապված է) մեր մշակույթի խոշոր վարպետների կյանքի ողբերգականությունը:

Դուրյան, Մեծարենց, Կոմիտաս, Տերյան, Ջարենց: Եթե վերջին երեքի կյանքը «թերավարտ» ասենք, ինչպես ասել են Պուշկինի մասին, ապա առաջին երկուսին «թերավարտն» իսկ չի համապատասխանում՝ նրանք գրեթե չսկսած հեռացան կյանքից: Ի՞նչ երջանկություն կլիներ մեր ժողովրդի համար, եթե նա տոնած լիներ Դուրյանի ու Մեծարենցի ծննդյան 75-ամյակները և լսած նրանց հոբելյարական խոսքերը, իսկ այժմ նշեր Կոմիտասի ու Տերյանի մահվան, ասենք, 10-ամյակները և այդ հանդեսներին ակտիվ դերում լինելու Ջարենցը: Ինչե՞ր կասեր նա Կոմիտասի ու Տերյանի մասին: Իսկ եթե բնությունը քիչ ավելի շնորհաբաշխ լիներ, հոբելյանական այս հանդեսներին կարող էր ներկա լինել ինքը՝ Վահան Տերյանը:

Ընդունված ճշմարտություն է, թե շատ կարևոր է գրողի հանդես գալու ժամանակը: Ասում են, որ Պուշկինից ու Լերմոնտովից հետո ոուս գրականության մեջ բանաստեղծություն գրելը խիստ դժվարացել էր: Խիստ դժվար էր նաև Տերյանի մոտքի ժամանակը: Շահագիգի համեստ տաղանդով անգամ անցյալում կարելի էր գրող հռչակվել, մնալ գրականության պատմության մեջ: Սակայն փոխվել էին ժամանակները և դրա հետ էլ՝ պահանջներն ու չափանիշները:

Արևելահայ պոեզիայում ամբողջ մեծություն մեր հմայքով կանգնած էին Հովհ. Թումանյանն ու Ավ. Իսահակյանը: Կանգնած էին իրենց անմեռ գործերով՝ «Անուշ», «Փարվանա», «Թմկաբերդի առումը», «Աբու-Լալա-Մահարի», «Երգեր ու վերքեր», սիրված բազմաթիվ բանաստեղծություններ: Շքամուտքից արևմտահայ գրականություն էին մտել Մեծարենցը, Վարուժանը, Սիամանթոն: Կարելի էր չնկատվել, չերևալ, հզորների ստվերում մնալ: Այլ էր, ասենք, Հովհ. Հովհաննիսյանի գործը—նա հանդես եկավ համեմատաբար «բաց տարածության» մեջ՝ ճանաչված նախորդներ ունենալով, բայց մեծ ժամանակակիցներ՝ ոչ: Արևելահայ գրականության մեջ հիմնականում լուել ու հրապարակից հեռացել էին Պատկանյանն ու Շահագիգը, զգացվում էր նոր բանաստեղծի կարիք՝ Հովհաննիսյանին «սպասում էին»: Տերյանը ինքը պետք է իր համար «տեղ բացեր», որովհետև նրա մեծ նախորդները նաև ժամանակակիցներ էին: Ջմոռանանք նաև, որ և՛ իբրև ժամանակակիցներ, և՛ իբրև նախորդներ, նրանք մեծ էին Հովհաննիսյանի անմիջական նախորդներից: Ուղղակի ասենք՝ Շահագիգից ու Պատկանյանից հետո ավելի հեշտ էր երևալ, քան Թումանյանից ու Իսահակյանից հետո ու նրանց ժամանակ: Եվ Տերյանը երևաց այդպիսի ժամանակ:

Նկատվել է, որ գրողի առաջին գիրքը արդյունք է լինում «նախնական կուտակման»—այն տարիների փորձի ու տպավորությունների, երբ նա դեռ գրող էլ չէ՝ երեխա է, պատանի, երիտասարդ: Երբ հայրենի դաշտերն է չափչփում, մեծերի սրտամոտ երգերն ու պատմությունները լսում, դպրոցում ու համալսա-

րանում սովորում, աշխատում: Երբ աչրը բացնում աշխարհի վրա, հազար ու մի լավ ու վատ է տեսնում, հուզվում ու զայրանում, սիրում ու անրջում, ցնորքներ ու իղբալներ փայփայում, հիասթափություններ ողբում: Այս ամենը սովորաբար ամենից առաջ ու ամենից շատ արտահայտվում են գրողի (ու մանավանդ քնարերգու պոետի) առաջին գրքում: Բանաստեղծների այդ առաջին գրքերը երբեմն լինում են ամենից լավը, երբեմն էլ, եթե ոչ ամենալավը, ապա ամենից անմիջականը:

Առաջին գրքերից էր 23-ամյա Տերյանի «Մթնշաղի անուրջներ»-ը: Շուրջ 70 փոքրածավալ բանաստեղծություն, ընդամենը մեկ ու կես մամուլ և մեծ բանաստեղծի ծնունդ: «Մի առավոտ զարթնում են հայտնի դարձած»—Տերյանը այսպիսիներից էր:

Ոտանավոր գրել կարողանալը, նույնիսկ խիստ գրագետ լեզվով ու սահուն շափատողերով, դժվար չէ, դժվարը բանաստեղծելն է՝ ընթերցողի սրտի զարկերի ուժով ընկալելը, նրան վարակել-հուզելը, ապրեցնելը: Այդպիսին է եղել «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն: «Երկրապագուներին թիվ չկար,— հիշում է Ստ. Զորյանը,— պահ մի մոռացվեցին մեր անվանի բանաստեղծները. ամենուրեք՝ երեկույթներում, ընտանիքներում, ընկերական շրջաններում արտասանվում էին Տերյանի սոնետներն ու էլեգիաները: Սկսվել էր պարզապես տերյանական շրջան, Տերյանի էպոխա: Օդը չիքն էր Տերյանով. երիտասարդություն խոսակցության նյութն ամեն տեղ նրա բանաստեղծություններն էին, իսկ ընկերների ու սիրահարների սրտագին նվերը միմյանց՝ «Մթնշաղի անուրջներ»:

Ընթերցողներից բացի Տերյանին ջերմորեն ողջունեցին ժամանակի գրական հսկաները: «Դուք բանաստեղծ եք... Ես ուրախությամբ ողջունում եմ Ձեր մուտքը գրական ասպարեզ—բարո՛ւ՜մ եկաք»—այսպես գրկաբաց ընդունեց Հովհ. Թումանյանը: «...Հրաշալի բաներ են, բյուրեղացած զգացումներ՝ անթերի ձևերի մեջ: Իսկական քնարերգությունը սա է—մաքուր լիրիկա»—այսպես «գրախոսեց» Ավ. Իսահակյանը:

Սակայն բոլորը չէ, որ հասկացան ու գնահատեցին Տերյանին: Նորարարականի, անսովորի, ոչ ավանդականի համար նրա դեմ ճակատ կազմեցին հնամուլները, նորի թշնամիները: Հիացում և թշնամանք — այսպես են դիմավորում մեծերին: Միայն միջակությունն է, որ ոչ ոքի չզայրացնելու և թշնամիներ ու հակառակորդներ չունենալու «առավելությունն» ունի:

Տերյանի պոեզիայի առթիվ շատ սրեր խաչվեցին: Եթե նրա մուտքը սիրով ողջունեցին մայրենի գրականության մեծ երախտավորները, ապա հակառակորդ բանակին զինվորագրվեցին հնամուլները, իրենց հոգու ու մտքի կոպտությամբ սերյանական հրաշակերտների անսահման նրբությունն ու թարմությունը ընկալելու անընդունակ հոգիները: Տերյանի շուրջը ծագած վեճերի մեջ գնահատող ու ժխտող կողմերը ամենից առաջ իրենց էին բնութագրում: Գրական խոշոր մեծության ու բարձր կուլտուրայի նկատմամբ թշնամանք տածողները ցույց էին տալիս իրենց ցածր ճաշակն ու հոգու աղքատությունը: Մեծ լույսը խտրում էր այդպիսի լույսին անսովոր աչքը:

Իսկ ի՞նչ էր կատարվել: Արևելահայ պոեզիան Հովհաննիսյանի, Թումանյանի ու Իսահակյանի ստեղծագործություններով նվաճել էր նոր բարձունքներ, ստեղծվել էր իսկական ժողովրդային ու խորապես ազգային գրականություն: Տերյանն այդտեղից պետք է սկսեր, XX դարի մարդու լեզվով պետք է խոսեր



ընթերցողի հետ: Ամեն ժամանակ ունի իր բովանդակությունն ու դրան համապատասխան ձևերը: «Ամեն դար,—ասել է Հայնեն,—ստանալով նոր գաղափարներ, ստանում է նաև նոր աչքեր»: Տերյանը երկար էր մտածել այդ ամենի մասին և հանգել էր միանգամայն ճիշտ եզրակացության՝ Թումանյանից ու Բսաֆայանից հետո «կամ նոր, բոլորովին նոր երգ պետք է ասել, կամ պիտի լուր»: Նախորդներին, Թումանյանին ու Բսաֆայանին կրկնելով, նրանց նմանվելով չէր կարելի նոր խոսք ասել. այդ է պատճառը, որ Տերյանը երկար նախապատրաստվում էր իր գրական դժվարին մուտքին: «Մթնշաղի անուրջ-ն:Էր»-ով նա մեռ գրականության անդաստանը մտալի շքամուտքից՝ միանգամից բերելով աննախընթաց նորություններ: Նրա մասին շատ հարմար է այլ առիթով ասված խոսքը՝ «Իր ճամփան ուրիշին ոտքի տակ չէ ինկած»:

«Մթնշաղի անուրջներ» գրքույկը մեր պոեզիայի մեջ նոր ու փայլուն էջ քանցեց, գաղափարական ու գրական կուլտուրայի իմաստով նոր աստիճան նշանավորեց և նոր ուղի նշեց նրա զարգացման համար:

«Մթնշաղի անուրջներ»-ը գրավում էին անսահման հարազատությամբ մարդու հոգեկան աշխարհի նվիրական հույզերի ու իդեերի նրբին ու մտերիմ արտահայտումով, անուրջ կույսի սուրբ շշուկով, լույս երազների քաղցրությամբ ու հուսախարությունների թախիծով, մթնշաղով, անուրջներով, ներդաշնակ կյանքի, արևի ու գարնան տենչանքներով: Տերյանը լիրիկական նոր հերոս բերեց:

Ձմռան գիշերն է մեղմորեն րեկնում  
 Եվ մեծ փողափ դեմքը մշուշում—  
 Ես դուրս եմ գալիս, փողոց եմ գնում  
 Եվ երկա՛ր, երկա՛ր մայրերն եմ մաշում:

Լատերի միզում մաղում է տալ բոց,  
 Ես աննպատակ շրջում եմ անվերջ.  
 Ես լուռ անցնում եմ փողոցից փողոց  
 Ու մեղմ լալիս եմ ցուրտ մշուշի մեջ:

Մեծ քաղաքի մայթերը մաշող և ցուրտ մշուշի մեջ մեղմորեն արտասովոր լիրիկական հերոսը նորություն էր հայ գրականության մեջ: Բնորոշ են նույնիսկ բանաստեղծությունների վերնագրերը՝ «Fatum», «Սենտիմենտալ երգ», «Էստոնական երգ» (հետագայում՝ «Կարուսել», «Փողոցի երգը», «Ձևներում Ձեր մանրիկ, նվագուն», «Մեղուգա», «Resignation», «Ա՛խ, Բուդուլուկ քաղաքում», «Փողոցում», «Փողոցի երգը», «Քաղաք», «Ա՛խ, դեռ հնչում է քնքուշ մուգիկը», «Անպես բարակ են Ձեր մատները, տիկին», «Նոկտյուրն», «Որպես մաղամ Բովարին», «Պետերբուրգ», «Փողոցներն ահա դադար են առնում», «Փողոցներում անհամար» և այլն): Սակայն Տերյանի լիրիկական հերոսը նոր է նույնիսկ այն ժամանակ, երբ հանդես է գալիս «Տիրություն» կամ «Շիրակի դաշտերից» վերնագրված բանաստեղծություններում: Նա նոր է ընկալումով, հոգեբանությամբ: Դրա համար բավական է համեմատել, օրինակ, Պոռչյանի կերպարների սիրային բացատրությունները կամ թեկուզ հենց Տերյանի անմիջական նախորդ Բսաֆայանի երգած բեզարած մաճկալին սպասող գեղջկուհու խոսքն ու ժեստը «Մթնշաղի անուրջներ»-ի անուրջ կույսի նրբանուրբ շարժումների ու մեղմ շշուկի հետ:

Հ. Հովհաննիսյանի «երկնային հրեշտակ» «սիրականը» իր «մեղմ շրթունքներով», «վարդ թշերով» ու «շամամ ծծերով» և Տերյանի «ցնորք աղջիկն» ու

«ցնորքների դիցուհին», «հրաշք սղջիկն» ու «արշալույսի պես հայտնվող» «կույսը» (նույնիսկ մի կարճ ժամանակ «պոետին զլխից հանած» «մեղուղան» իր «ահեղ գզվանքներով» ու «մութ ցանկություններ») տարբեր անհատականություններ են: Տերյանի պոեզիայում սերն էլ, վիշտն էլ, արևածագի ու գարնան սպասումն էլ ուրիշ ձևերով ու եղանակներով, արտահայտչական ուրիշ միջոցներով են երգված: Այդ է պատճառը, որ Տերյանը ասում, իսկ Քումանյանը հաստատում է, որ «Մթնշաղի անուրջներ»-ը նոր խոսք է, «նոր երգ», «գրեթե բոլորովին նոր բաներ»: Իհարկե, Տերյանի լիրիկական հերոսը շատ բան ունի անցյալից, նաև դրա մեջ է նրա կապը մեր գրականության ավանդների հետ: Եվ դա հասկանալի է, նորարարությունը ավանդների անտեսում չէ, խզում չէ, այլ օգտագործում և նորի ստեղծում:

Տերյանը մեր ամենից ինքնատիպ գրողներից է, անհնար է նրա ձայնն ու շունչը իսկույն շտարբերել, նրա տողն ու խոսքը շփոթել ուրիշի հետ:

Այս ամենն էին պատճառը, որ Տերյանը, ինչպես նշել է Իսահակյանը, «իր հայտնությունները զլխավորեց մեր լիրիկան»: Տերյանը, ասել է Հ. Քումանյանը, հանդես եկավ մեր բոլոր պոետներից ամենից կազմակերպված: Եվ «տարօրինակ» էրևույթ՝ իսկական գիտականորեն խոսում էին նոր գրական ասպարեզ մրտած բանաստեղծի ոչ թե կրած, այլ թողած ազդեցությունների մասին: «Երեւելով ինքնա ուժեղ էր և հմայիչ,—ասել է ժամանակակիցը,—որ Տերյանի պոեզիայով ներշնչվեցին, նրա ազդեցությունը կրեցին անգամ ավագ սերնդի բանաստեղծները՝ ոչ միայն Մատուրյանը, այլև Իսահակյանը, Քումանյանը և Հովհաննիսյանը... Տերյանից հետո ոճական վայելչության պահանջը խիստ ուժեղացավ»: Այդ կարծիքը հայտնվել է բազմիցս (նաև սովետահայ գրականագիտության մեջ): Իհարկե, ասվածը բառացի չպետք է հասկանալ՝ ճիշտն այն է, որ Տերյանի բարձր արվեստով, պոետական նուրբ կուլտուրայով և գրական հարուստ ու արտակարգորեն մշակված հայերենով գրված բանաստեղծությունները ստիպում էին նույնիսկ մեծ ժամանակակիցներին նորից աչք ածել իրենց «պոետական տնտեսությանը», ավելի ձգված զգալ: Տերյանը տրադիցիա դարձրեց խստապահանջությունը, պոետիկական բարձր տեխնիկայի մտահոգությունը:

Գրականության պատմությանը ծանոթ են առանձին գրողների ու գրքերի անօրինակ, բայց կարճատև փայլատակումներ: Դրանք մոդայական ու վաղանցուկ հրապուրանքներ են, էստրադային հաջողություններ: Տերյանի հմայքն ու փառքը այդ տեսակներից չէին: «Մթնշաղի անուրջներ»-ի տպագրությունից տարիներ անց՝ 1913 թ. Ավ. Իսահակյանը գրել է. «Հիմա քո հազարն է»—քո տիրապետության ժամանակը: Էլ ավելի ուշ՝ 1917 թ. խոսելով «ռուսահայ բանաստեղծության» երեք շրջանների մասին, Հովհ. Քումանյանը ասել է. «1908 թ. վաղանիստ... Վ. Տերյանը հրատարակեց իր «Մթնշաղի անուրջներ»-ը ու առաջ եկավ երրորդ, նորագույն շրջանը, որի մասին հանդիսավոր ու հավաքական կերպով խոսում ենք էսօր Հայ գրողների ընկերության մեջ» («Քումանյանը քննադատ», 1939, էջ 400):

«Մթնշաղի անուրջներ»-ի անանցանելի հմայքի մասին խոսել են նաև Չարենցը և շատ ուրիշներ: Սակայն թե ի՞նչ կատարվեց Տերյանի ժամանակակից հետևորդների հետ, կարելի է միայն վառ երևակայությամբ պատկերացնել: Իհարկե Բելինսկին է ասել, թե մեծ գրողը երիտասարդ գրողներին ստիպում է իր նվագի տակ պարել: Տերյանի նվագի տակ պարողներն այնքան շատ էին, որ



և՛ իսկական պարողներին, և՛ նվագողին ղեկավարություն ու ղայրություն էին պատճառում: Ժամանակի մամուլը հեղեղվել էր տերյանական բանաստեղծություններով ու բանաստեղծներով: Տերյանի նման գրելով, նրա մոտիվները երգելով՝ երազում էին նրա փառքը: Տերյանը կանգնած էր սեզ Բարձունքում, հետևորդները քրտնամխած, գրիչ, թուղթ ու թանաք առած ձգտում էին դեպի արևոտ կատարը, սակայն չէին կարողանում կտրել նրա անցած ճանապարհի տասնորորդականներով շափվող մասը: Թերթերն ու ամսագրերը ողողված էին անուրջներով, տխրություններով, երազանքներով—նույնիսկ Տերյանի վերնագրերն էին վերցնում, «տերյանական» բառերից զրական անուններ ընտրում: Սակայն՝ հին խոսքը պահում էր իր ուժը. «Բազումք են կոչեցեալք և սակավք ընտրեալք»: Եթե Տերյանի արգասավոր ազդեցությամբ իր առաջին գործերը կերտած Ե. Զարենցը դեպի ինքնուրույնություն ու պոետական առնականացում էր գնում, ապա ինքնակոչ հետևորդներից շատերի մոռացումն ու Տերյանի տաղանդի ճանաչումը հակադարձ համեմատական էին: «Տերյանի նման» գրողներին պակասում էր զլխավորը՝ նրա արվեստը, նրա երգած զգացմունքների խորությունը, անկեղծությունը, անմիջականությունը, ա՛յն, ինչով Տերյանը տարբերվում էր «Տերյանի պես» գրողներից:

Տերյանի իսկական հետևորդները ղեկավարում էին նրա «էպիգոներներից». «Օ՜հ, մի օրենք լիներ, որ այդ անտաղանդներին գրելն արգելեր»,—զայրացած ասել է Զարենցը: «Դժվար է, դժվար է այդ կատարելության հասնելը: Հնարավոր է, հա՛,—հարց էր տալիս հաճախ Տերյանի մասին խոսելիս: Եվ, աչքերը կկոցելով, բացասաբար շարժում էր գլուխը:—Հապա էլ ինչի՞ են աշխատում կրկնե՞լ նրան աղավաղված ձևով»:

\* \* \*

Տերյանը մեր գրականության ամենամեծ սիրերգականներից է:

Սեր ու երգ է իմ հոգում—

Սիրո երգ է իմ հոգին:

Այսպես է ասել նա իր մասին: Եթե զեղեցիկը կյանքն է, իսկ սերը, ինչպես ասել են, «կյանքի պոեզիան ու արևը», ապա ինքնին հասկանալի է, որ ոչ կյանքը առանց արևի կլինի, ոչ էլ պոեզիան առանց սիրո: Տերյանի «սրտի լարերից», իհարկե, միայն սիրո լարը չի մնացել, բայց այդ լարը նրա քնարի «ամենարանուկ» լարերից է, ամենից շատ հնչողներից: Սերը Տերյանի պոեզիայում աստվածացված է, այն հոգը է մահվանից, նրա բացասումն է, ժխտումը. և ինքնահաստատումը՝ «սիրո կանչով կանչիր ինձ և կարթնանամ ևս»:

Տերյանը դատապարտել է «հեշտասան» սերը, «անհամեստ մերկությունը», իսկական սերը համարելով «սուրբ ու աննեխ ծաղիկ»: Պազուտ, տարփատենչ զգացումներն ու «տոփի գրկաբացումները» (Մեծարենցի արտահայտությունն է) Տերյանի սիրային լիրիկային հատուկ չեն: Նա սիրում է կուսական ու ամոթխած փայփայանքները և մանկական անպաճույճ երգի պես միամիտ ժպիտները: Տերյանը կնոջ մեջ զնահատում է վսեմն ու ազնվացնողը:

Մեծ է սիրո, մարդկային այդ ամենից վեհ ու նվիրական զգացմունքներից մեկի՝ «բանաստեղծական արտահայտություն» զեղազիտական և հասարակական դերն ու նշանակությունը: Դիտվել է, որ սերը (ուրեմն և նրա պոետական

արտահայտություն սիրո լիրիկան) իդեալացնում, աստվածացնում է սիրո առարկան ու քնքշացնում, ազնվացնում է մարդուն, թո՛ւ չի ձգտում է տալիս նրա հոգուն: Այդպիսի ազնվացնող, քնքշացնող և «թո՛ւ չի ձգտում» տվող ուժով է օժտված Տերյանի սիրո լիրիկան:

Մական նրա ինչպես սիրո լիրիկային, այնպես էլ ամբողջ պոեզիային հատուկ են թախիժն ու տխրությունը: Բնորոշ է նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուի առաջին իսկ բանաստեղծության վերնագիրը՝ «Տխրություն»: Ի՞նչ առիթ ուներ բանաստեղծն ուրախ լինելու, երբ նախքան հոգն արյամբ էր ուռճանում, երբ բուրժուական աշխարհի գայլամարդկանց ցուրտ ու պաղ միջավայրում խոցոտվում էր նրա ազնիվ սիրտը, խեղդվում լավի համար այրվող հոգին:

1905 թ. մի առիթով ներկա լինելով գյուղացիների խնջույքին և լսելով նրանց երգերը, Տերյանը ցավով նկատել է. «Ա՛խ, ի՛նչ տխուր աչքեր ունեն մեր գյուղացիները, ի՛նչ մտահոգ դեմքեր՝ արևով, անձրևով այրված ու բովված: Ի՛նչ դառն աղքատություն է կաթում վրաներից, բայց ուրախանում են: Բայց ի՛նչ թախժոտ ուրախություն է այս: Ի՛րեւ թե ուրախ երգեր են երգում, բայց ինչքա՛ն վիշտ ու մորմոք կա սրանց ուրախ երգերի մեջ: Դարերի տառապանքն է խոսում սրանց բերանով»:

«Դարերի տառապանքը» — ահա մեր գրականության տխուր նվազների հիմքն ու հողը: Այդ հողից է սնվել նաև Տերյանի տխրությունը: Այն թույլ ու ընկճված հոգու նկուն ողբ չէ, ոչ էլ սիրած իրականության կոյստի պատճառած վիշտ, ողբասացություն կործանվող արժեքների համար, այլ իրականության հետ անհաշտ պոետի խոր և ազնիվ տխրություն: Իսկական ու մեծ արվեստագետները անցյալում միշտ էլ դժգոհ են եղել իրենց ժամանակից և ձգտել են նոր ու լուսավոր ափեր: Հակառակ միջակի սակավապետության ու «ահմանափակության, մեծը միշտ վեր է սավառնում»՝ նոր հորիզոնների կարողոր սրտում:

Անցյալի գրականության խոշորագույն դեմքերի տխրության ու վշտի պատճառը կյանքի բուռն կարոտն է, կենսասիրությունը, աշխարհն ու մարդուն ազատ ու երջանիկ տեսնելու ցանկությունը: Այդպիսի տխրությունը մղում է որոնումների, սնում է լուսավոր մտքեր ու երազանքներ: Վատի ժխտումը և լավի կարոտն ու երազանքը անբաժանելի են: Պետք է տարբերել լավ կյանքի կարոտի թախիժն ու տխրությունը, նույնիսկ հիասթափությունը հոռետեսության լավի կարոտից: Հիասթափությունը կյանքի մասին լավ պատկերացումից է ծնվում, հոռետեսությունը՝ վատ: Հոռետեսը պնդում է, որ կյանքը հենց այդպես վատ է, դժոխք, հիասթափվածը ցավում է, աշխարհում, որ կյանքը այդպես վատ է: Ընդհանուր չէ մի ժամանակ գրականագիտության մեջ բավական տարածված այն կարծիքը, թե մեզ հետ ոչինչ չունեն անցյալում թախիժ ու տխրություն երգած գրողները, թե այդ երգերով նրանք կապվում են (կամ տուրք են տվել) դեկադանսին:

Սովետական մարդուն խորթ չէ մարդկային զգացմունքներից որևէ մեկը՝ փոխադարձ սիրո զմայլանքն ու անփոխադարձի տվայտանքները, ընկերոջ անհաջողության պատճառած ցավը, անցած պատանեկության ու երիտասարդության կարոտն ու ափսոսանքը: Ինչպե՞ս կարելի է գիշերը չքնել ծանր ապրումներից, առանց աչք փակելու լուսացնել և առավոտյան խոսել այն մասին, թե մեր օրերում չեն կարող լինել տխրության պահեր, ուրեմն և գոյու-

թյան իրավունք չունեն այնպիսի բանաստեղծությունները, որոնց մեջ վիշտ ու տխրություն է արտահայտված: Ինչպե՞ս կարելի է շհասկանալ, որ մեր հոգուն մոտ ու հարազատ են մարդկային զգացմունքների հարուստ նրբերանդները: Այս հարցը թերևս ամենից լավ Չարենցն է լուծել՝

Ինչեա՞ն եմ ես, գիտե՞ս, սիրում հիմա  
Ոգի՛, ոգի՛ սրբող, բայց չկրճող  
Այդ չիճշ քախիծը Բո խինդանման,  
Այդ տխրությունը Բո ստեղծագործող...

Այո, «ոգի սրբող» և «ստեղծագործող» տխրություն:

Տերյանը որոնել է մեծ ճշմարտությունը, արյունոտված սրտով հեկեկացել աշխարհում տիրող անարդարության, մարդու ընկած վիճակի, հայրենի երկնակամարում հավաքված թուխպերի համար: Երբեմն նրան թվացել է, թե շկա ելք այդ ամենից, թե «ամեն կողմերում է խավար», ուրեմն պետք է շտիրել, չխորհել, հեռանալ: Սակայն հումանիստ գրողը չի կարող ապրել առանց իր նմանի, առանց մարդու: Չէ՞ որ նրա վշտի պատճառը իր նմանի ծանր վիճակն է, «աշխարհաշեն մարդը»: Եվ նա՝ «նոր տենչերի պայծառ հրդեհը» հոգում, վերադառնում է «մենություն բանտից», «աշխարհը գրկում», «հավատով նայում գալիքին»:

\* \* \*

Տերյանը ստեղծել է հայրենասիրական երգի անգերազանց արժեքներ:

Ժողովրդի վշտով ու խինդով ապրող, իր հոգում «նաիրյան հոգու բարձր տառապանքը» կրող բանաստեղծի համար հայ «արյունվիկ ժողովրդի» վիճակի հարցը դարձել է «ֆանտոմ», բոլոր հարցերի հարցը: Այդ «ֆանտոմ»-ից է ծնվել-սնվել «Երկիր նաիրի» երգաշար-պոեմը, որը, Չարենցի արտահայտությունով, դարձավ «նաիրյան խոսքերի գանձարան» (նաև՝ «երգերի սուրբ գանձարան»): «Նաիրական» այդ հրաշակերտները զգացմունքի զարմանալի հարազատությամբ ու խորությամբ և կատարման աննախընթաց բարձր արվեստով նոր ու փայլուն էջ բացեցին հայ մշակույթի պատմության մեջ: Մեր ժողովրդի կրած ահավոր ողբերգության ամենախոր ու ամենադրամատիկ արտահայտություններից է «Երկիր նաիրի»-ն, հանճարեղ մի պոեմ, որ կարող է պատիվ բերել ամեն մի ժողովրդի գրականության:

«Երկիր նաիրի» շարքը ձևավորվեց պատերազմի տարիներին, երբ ամեն հիմք ուներ պոետի տաղնապար՝ պիտի ապրի՝ նաիրին, թե՛ պետք է վերանա աշխարհից, պատմությունից:

Վտանգի տակ էր դարերից մաթառումներով ու ապրելու իրավունքով եկած մի հնագույն ժողովրդի գոյության հարցը: Ժողովրդասպան պատերազմը շարունակում էր մոլեգնել: Երբեմնի հույսն ու հիասթափությունը, հայկական նորանոր քարոզերը, իմպերիալիստական պետությունների «կեղծ զգվանքները», ցարական հրամանատարության կամքով կատարված նահանջը և մերկ սրի առաջ մնացած ժողովրդի օրհասական վիճակը արյունոտում են բանաստեղծի նուրբ հոգին: Ակամա հիշում ենք Թումանյանի հայտնի խոսքը. «Ես առաջ եմ գալի... մի արյունոտ հողից, մի անօրինակ զարհուրելի պատմությունից, մի հոշոտված ժողովրդից»:



Այս ամենին միացավ 1915 թ. գարունը՝ ամենամուսնու գարունը հայ ժողովրդի պատմության մեջ, 1915 թ. ապրիլը, որ կարծեք վերջ պետք է դնե մեր ապրելուն։ Իթիհատական ոճրաշատ Թուրքիան, իմպերիալիստական պետությունների դավադիր համաձայնությամբ, ծրագրել ու իրականացնում էր վաղնջական ժամանակներից մաքառումներով XX քաղաքակիրթ դարին հասած մի ժողովրդի զանգվածային բնաջնջումն ու տեղահանությունը, ժողովրդի, որի միակ «հանցանքը» կառուցելը, ստեղծելը և դրանք հազարաշող թուր կայծակիով պաշտպանելն էր։ Բառարաններում իսկ հանդիպելիս սարսուռ ազդող ևղերական եղեռն բառը լայնացնում էր իր սահմանները և հասնում գենոցիդին—ազգաջնջման։ Տերյանին ցնցել է 1915 թ. եղեռնը։ Մեծ պոետն ու քաղաքացին, նկատի ունենալով 1915 թ. մայիսը, գրել է.

Հայրենիքում իմ սրճաներկ  
Գիշերն իջավ անլույս ու լուռ\*.  
Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ  
Եվ վարդի բույր և սրտի հուր:  
Ամեն մի միտք հիմա մի վերհ,  
Ամեն հայացք հատու մի սուր.  
Արևոտ ղիկերն են համր ու մերկ  
Նայում երկինք անզոր ու դուր:

Տերյանը հայրենիքն ու նրա ժողովրդին սիրել է որդիական սիրով։ Ոչ թե փքուն ճառ, «արյուն ոթելու» գոռում-գոչյուններ, այլ կսկիծով ասված սրտաբուխ խոսք՝ վեհ ու պարզ, երգումի պես հաստատ, որդիական զգացմունքի պես մեղմ ու քնքուշ։ «Թթված ազգամուրի ճշուն սերը» խորթ է եղել Տերյանի հոգուն, նա զգվանքով է արտահայտվել հայկական հարցի անկոչ կարգադիրների «հրաբորբոք հայրենասիրության» մասին։

Ձեմ հավատում եիշերին ձեռ ցնծագին  
Եվ իանդավառ աղմուկներին այդ շփոր.  
Գաղտնի մի քույն կեղեքում է իմ հոգին  
Եվ ձեռ իմնդո սարսեցնում է. որպես բոր:  
Ո՛վ է կանգնել պաշտպան երկրին իմ ավեր,  
Ո՛վ է բարգման մեր դառավոր տանջանքին...

Տերյանը երգել է մեր ժողովրդի և՛ անցյալ փառքն ու մեծագործությունը, և՛ ժամանակակից ծանր ու օրհասական վիճակը, և՛ ապագայի նկատմամբ ունեցած հույսն ու հավատը։ Սակայն անցյալը երգելիս չի տարվել պատմական պատրանքներով ու «պատմական բարձեր» չի առաջարկել՝ քնելու կամ «պատմական ուսանչ»՝ կոտորածների համար, ներկան երգելիս չի հնչեցրել և՛ մեզ, և՛ մյուս ժողովուրդներին վիրավորող «արյան ձայներ»։

Դեռ 1905 թ. նա ասել է. «Շատ եմ սիրում իմ բարձրագահ հայրենիքը և նրա խոնարհ ժողովրդին, որ աշխատում է ու երազում, տքնում է ու երգում»։ Այդ աշխատող ու տքնող, երազող ու երգող, ստեղծագործող ժողովրդի «պայծառ հավատն ու հույսը» փրկելու մտահոգությամբ էր տոգորված Տերյանը։ Նա գիտեր, որ չեն մեռնում աշխատող ու ստեղծագործող ժողովուրդները, որ իր նախնի փյունիկի պես կրակից հառնելու է՝ նոր գեղեցկությամբ ու նոր փառքով։

\* Առաջին հրատարակություններում՝ «Մայիսն իջավ անլույս ու լուռ»։

Ամբակուտ է մեր հոգին—դարերի գավակ՝  
Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ:

Շատ է տեսել երկիրն իմ գավ ու արհավիրք,—  
Լսեց է ալետեղ ամեն երգ և ողբ ամեն զիրք:

Փերված ենք մենք—ո՛չ ստույգ—գերված մի արծիվ,  
Զառուրյան դեմ վեհախոս միշտ, վատի պեմ ազնիվ:

Բարբառոսներ շատ կրդան ու կանցնեն անհետ,  
Արհայական խոսքը մեր կրմեա հավետ:

Նաիրյան կարոտն ու նաիրյան մորմոքը, համաժողովրդական աղետն ու չսպիացած վերքերը թշնամությամբ չլցրին նրա մարդասեր հոգին, մարդու, նրա բախտի ու կյանքի համար տրոփող սիրտը: Տերյանը գտավ ճիշտ ուղին՝ նա իր ժողովրդի վիշտը չհակադրեց մյուս ժողովուրդներին, ընդհակառակը, միացրեց: Նա գերված, բայց «ստրուկ չդարձած» և արծվային ճախրանքների ընդունակ իր ժողովրդի վերածնության հիմքը նրա հոգևոր ու կենսական անսպառ ուժերի և համառության անհաղթելի շարժմանը միանալու մեջ տեսավ: Այսինքն նաիրյան վիշտը հասցրեց հեղափոխությանը՝ «Կարմիր Նաիրի»-ին: Սա Տերյանի հայրենասիրական երգերի նոր ու աննախընթաց որակն է, այն բարձունքը, որին մեր դասական հեղինակներից շատ քչերը հասան:

Երբեմն ինչքան անարդար կարծիքներ կարող են լինել: Նույնիսկ «Երկիր Նաիրի» շարքից հետո էլ սրեր էին խաչվում Տերյանի առիթով, չէին տեսնում նրա բերած նորը և պնդում էին, թե նա հալ ազգային բանաստեղծ չէ:

Տերյանին, ինչպես ուսու գրականության մեջ, ասենք, Պուշկինին, ազգային չհամարողները նեղացնում էին «հայրենակիցներ» բառի սահմանները և ազգային էին համարում այն երկերը, որոնց բովանդակությունը առնված էր ցածր դասերի կյանքից, որոնց մեջ պատկերված էր գյուղացիների ու արհեստավորների կյանքը:

Մեզ մոտ, ասել է Բելինսկին, «վաղուց ի վեր արմատացել է այն խիստ տարօրինակ կարծիքը, թե իբր ֆրակ հագած ուսու կամ կորսնտ հագած ուսու կինն այլևս ուսու չէ, և որ ուսու ոգին զգացվում է միայն այնտեղ, որտեղ կան գիպուն, տրեխ, հացի օղի և թթու կաղամբ» (Քննարկ երկեր, 1948, էջ 367):

Այսպես չի՞ եղել նաև մեզնում: Ո՞ւմ մտքով է անցել վեճի առարկա դարձնել և հայկական չհամարել բոլոր այն երկերը, որոնց մեջ պատկերված է հալ գյուղաշխարհը՝ գեղջուկներով ու գեղջկուհիներով, պարտատերերով ու պարտապաններով, տանուտերերով ու մովրդիկներով, գյուղի «պեյզաժի» անհրաժեշտ մասը կազմող աթարի բուրգերով ու խոտի ղեզերով, լույսը երգիկից ստացող խճիթներով, գյուղացուն՝ տրեխով ու քիթ ծակող քրտնահոտ շորերով, «քեղուրբան»-ով, առածներով, մասալներով, հաճախ բարբառով, դարավոր սովորություններով, կարծես անփոփոխելիության դատապարտված նիստ ու կացով: Իսկ եթե մի երկու ծերուկ ու պառավ էլ լինեն բուռնոթու անբաժան տուփով կամ թուփունի քիսայով՝ ազգային որակը ապահովված է ու ապահովված:

Կյանքը հեղաբեկվում էր, հին սլատկերացումները փոխվում էին, XX դարը իր հախուռն ընթացքով տակնուվրա էր անում իր ժամանակն ապրածն ու մահվան դատապարտվածը, ազգային խառնվածքի նոր գծեր էին ստեղծվում, իսկ պահպանողականությունը կառչում էր իր դարն ապրածին և կարծում էր, թե

ազգր կպահպանվի, իթե ստղետ մնա ու խավար» և, ընդհակառակը, կկորցնի ազգային գծերը, իթե կրթություն ստանա ու ազատվի իր «ավանդական սնահավատություններից և սովորություններից»:

Ըստ ավանդապահների տրամաբանության՝ շուխա հաղնելով մնում ենք ազգային, իսկ այն կոստյումով փոխելով՝ դրկվում ազգային հատկանիշից: Նրանք չեն կարող պատասխանել, թե ինչու տրեխն ու արխալուզը պահում են ազգային գծերը, իսկ կոշիկներն ու վերարկուն՝ ոչ, ինչու հոդե հարթ տանիքն ու երդիկը պահում են ազգային գծերը, իսկ թիթեղածածկ տանիքն ու լուսամուտը՝ ոչ: Չէ՞ որ չի կարելի ազգային լինելու համար ապրել գետնափոր տնակներում, բավարարվել երդիկից կաթող լույսով, տրեխներով ու արխալուզով օպերա գնալ և սիրած աղջկա հետ բացատրվել մեր ջանգլուկների քառյակներով, որովհետև Տերյանի «Տխրություն»-ն ու «Շշուկն ու շրշուն»-ը որպես թե ազգային չեն: Մեր մշակույթի մեծ գործիչները հաստատում էին, որ Տերյանի երգած «թախիժն ու երագները, մշուշն ու աղջամուղջը» հարազատ են «մեր երկրին ու մեր հոգուն»:

Ը պատասխան տերյանամերժ գրականագետների, Թումանյանը Տերյանին հուշակեց ոչ միայն ազգային մեծ դրող, այլև հայ պոեզիայի գալիք օրն ուղենը-շող բանաստեղծ, հայ նորագույն գրականության վառ անհատականություն. «Ցանկանում են,— ասում է նա,— որ բարգավաճեր մեր նորագույն գրականությունը: Բայց ահա ձեր առջև նստած է մեր նորագույն բանաստեղծույթյան փայլուն ներկայացուցիչը—Վահան Տերյանը, որի երգերը կարող ենք պարծանքով հանել ոուսաց նորագույն բանաստեղծներից ամենալավերի դեմ և որին հրրճվանքով ողջունում եմ Հայոց գրողների բնկերության անունից» («Թումանյանը քննադատ», 1939, էջ 314: Հնդգծումը մերն է—Վ. Պ.):

\* \* \*

Տերյանի պոեզիայի արժեքը միայն պատմական չէ, այլ նաև խիստ արդիական: Նրա պոետական բարձր կուլտուրայով գրված հոգեբուխ երգերը մեր պոեզիայի շատերին են առաջին զարկը տվել: Տերյանը ներկա է նրանց պոեզիայում: Ներկա է իբրև խորհրդատու, իբրև ուսուցիչ ու ընկեր: Ներկա է ոչ առանձին բաներով ու արտահայտություններով, այլ այնպես, ինչպես Չարենցն է բանաձևել շիներ Տերյանը, ես՝ ես չէի լինի:

Տերյանի պոեզիան արվեստի համալսարան է այսօրվա մեր բոլոր սերունդների պոետների համար: Նա դարձել է ակամա գրական դատավոր, որ զսպում է ոտանավորիչների եռանդը և առավել բարեխղճության է մղում մեծերին: Տերյանից հետո չի կարելի թափթփված կառուցվածքով ու ցածր տեխնիկայով բանաստեղծություն գրել: Չի կարելի մթամած պատկերներով ու խճողված շափատողերով երգել մարդու ինտիմ աշխարհը, նրա հույզերը, չի կարելի շօգտագործել մեր լեզվի հնչական բոլոր հնարավորությունները, նրա հուլթի հարստությունը: Չի կարելի այսօր ստեղծագործել և շմտահոգվել մեր գրականության «գալիք օրվա» խնդիրներով՝ Տերյանին հուզող ամենակարևոր հարցով:

Մեծ ու անգնահատելի է Տերյանի դերը նաև մեր այսօրվա մարդկանց էսթետիկական դաստիարակության բնագավառում: Եթե դուք ուզում եք վայելք ստանալ արվեստից, ասել է Մարքսը, ապա պետք է լինեք գեղարվեստորեն



գարգացած մարդ։ Հաճախ է մոռացվում մեր մարդկանց «լմոցիոնալ անգրադիտության» վերացման անհրաժեշտության հարցը։ Սովետական նշանավոր դրող Լեոնովը իրավացի կերպով նշում է, որ պետք է մարդկանց սովորեցնել վայելելու «մայրամուտի, արշալույսի, թռչունի երգի պատճառած բերկրանքը»։

Կարելի՞ է լիարժեք մարդ լինել՝ հոգեկան ու մտավոր աշխարհի ողջ բազմազանությամբ և շփանալ ամպերի հրդեհով՝ աշնան մայրամուտին, չգալ, թե խնայես և մեռնող արեգակը տխուր գգվանքով վառում լեռների կատարները, չլսել բաց պատուհանի տակ աշնան մշուշում սրսփացող վեղուղեշ բարդիների շշուկն ու շրշույնը և (եթե պատանի եք կամ երիտասարդ) չգալ ձեր շուրջը անտես ու հուշիկ շրջողի պայծառ տրամոթյամբ հյուսված անուրջը։ Կարող է մարդու հոգին ազատվել ճղճիմ զգացմունքներից, մաքրվել, բարձր և ազնիվ խոհերով ու զգացմունքներով խանդավառվել, զգալ մեծ պոետի պարզեցած երջանկացնող վայելքը առանց պոեզիայի։ Լավ է ասել սովետական բանաստեղծը.

Առանց զարնան հմայմն ու շունչն զգալու  
Զի կարելի վնոել զործեւ պարտիական։

Կարելի՞ է, օրինակ, պատկերացնել, որ անհուն նրբության ու մեղմության տրամագրող «Տխրություն» և «Շշուկ ու շրշույն» բանաստեղծությունները սիրող մարդը կոպիտ ու գոեհիկ լինի։

Զեմ դավաճանի իմ նվառդին,  
Ուրբան էլ դյուրես, օ, Շամիրամ,  
Ուրպես արբան այն, մանուկ Արան,  
Զեմ դավաճանի իմ նվառդին։  
Ուրբան փորձանք դա իմ զոհ-սրտին,  
Ուրբան էլ փայլող փայե սրան,  
Զեմ դավաճանի իմ նվառդին,  
Ուրբան էլ դյուրես, օ, Շամիրամ։

Կարող է այս բանաստեղծությամբ ապրող, այս ոգով դաստիարակված մարդը դավել, դավաճանել։

Առաջին հայացքից կարող է թվալ, թե քիչ օգտակար բան կա «Տխրության» կամ «Շշուկ ու շրշույնի» մեջ՝ չէ՞ որ այնտեղ չի կարելի գտնել մարտագոռ կանչեր, խրատաբանություն։ Չմոռանանք, սակայն, շատ կարևոր մի բան՝ Տերյանի անսահմանորեն նուրբ ու մեղմ, ազնիվ ու հրապուրիչ խոսքը վարակում է ընթերցողին, ապրեցնում, համակում, տարիների ընթացքում դառնում էություն, մեղմացնում ու ազնվացնում է նրա բարքը։

Տերյանի պոեզիայի ամենագլխավոր առավելություններից մեկը կերտվածքների լրիվությունը, ավարտվածությունն ու բարեկազմությունն է։ Անհրնար է ցույց տալ Տերյանին բավարարած և նրա կողմից տպագրության ներկայացված որևէ բանաստեղծություն, որն ունենա կառուցվածքային թերություններ, որի մեջ որևէ տրամադրություն կամ խոհ աշտահայտված չլինի լրիվ և մանավանդ զուսպ ու բարեկազմ չլինի։ Արևելահայ նոր շրջանի պոեզիայում կարելի է այլ կարգի առավելություններ նշել ուրիշների մոտ, որ չունի Տերյանը, սակայն նշված դժբրով (միասին վերցրած) նա մնացել է չերկրորդված, ու աննախընթաց։ Բազմադարյան մեր լեզուն իր հնչական ողջ հարստությամբ, իր փափկությամբ, քնքշությամբ, նրբությամբ, մելոդիկ ու հարմոնիկ ձայնե-

րով, իր ողջ թովչանքով, մեղմ, շոյող գույներով ու երանգներով հանգես եկավ սրա պոեզիայում: Հայոց լեզվի ուժն ու հմայքը մարմնավորող ամենամեծ պոետներից է Տերյանը, նրա պոեզիան գեղոն է հայ լեզվին:

\* \* \*

Ստեղծագործական օրինաչափ էվոլյուցիան Տերյանին բերեց դեպի հոկտեմբերով նշված հանրակարգը: Տերյանին դեպի հոկտեմբեր բերեցին «Մթնշաղի անուրջներ»-ը, «Ոսկի հեքիաթ»-ը, «Վերադարձ»-ը, «Երկիր նաիրի»-ն: Այո, և՛ քաղաքացիական երգերը: Ե՛վ «Տխրություն»-ը, «Շշուկ ու շրշուն»-ը մարդու, նրա բախտի ու ճակատագրի համար մտորումները, նաիրյան հողի տառապանքը, «լուսե հովտի», նոր ու պայծառ հորիզոնների կարոտն ու տենշտնքը: Դա օրինաչափ ընթացք է: 1910 թ. «Վերադարձ» երգող Տերյանը, որ հետո էլ բանաստեղծին կոչ էր անում «սիրտը վառ ատրուշան» գարձնելով լուսավորել ժողովրդի անցնելիք ուղին, Հոկտեմբերին բռնկած հրացուլքին տարավ այդ ատրուշանի կրակը, նետվեց ճարակող հրդեհների մեջ՝ նորի ու մարգկային համար, «միշտ արշալույսի ձգտող» իր ժողովրդի ու մյուս ժողովուրդների համար: Աչքերը հառած հորիզոնում բռնկած հրացուլքերի կարմիրին, նա աղ-դարարեց.

Հարյավ հավետ, հարյավ հոգին իմ ուր  
Մահանումն ֆեից, ֆեից անաբ.  
Բե՛զ եմ երգում, կարմիր արյունաբորբ  
Ազատության զրոշ—ֆեօ փա՛նֆ...

Եվ հարյավ նրա հոգին այն ժամանակ, երբ մարմինը մեռնում էր: Ու հարյավ նաև «հարյավ» բառը: Ինչքա՛ն երկար ճանապարհ է անցել այն: Հարյուրամյակներ շարունակ «Քրիստոսի» ու «մեռելոցի» հարևանը (Քրիստոս յարեալ ի մեռելոց) հանկարծ ցնծուն ու խենթ մրրկահավի նման կտրվել է և՛ Քրիստոսից, և՛ մեռելոցից ու կապվել հրդեհված հոգու հետ, նոր հարևաններ ընտրելով «կարմիր»-ը, «արյունաբորբ»-ը, «ազատության զրոշ»-ը: Ու ապա հնչեցին քայլերդի ու թմով «Ե՛վ գեմոկրատիա»-ն, պոետական հրամանի ինտոնացիայով կոչը՝ ինտերվենտների դեմ: Ըր ստեղծագործությունամբ ավարտելով հայ դասական պոեզիայի վերջին էջը, Տերյանը դարձավ սովետական և սովետահայ գրականության առաջին սկսողներից ու հիմնադիրներից մեկը:

Մեղմախոս ու նրբանուրբ տողեր կերտած Տերյանը առաջիններից էր, որ պոետական սխրանքը համատեղեց քաղաքացիական մեծագործության, զինվորագրվեց նորի, հեղափոխության բանակին, դարձավ կոմունիստ, լենինի ու Շահումյանի բարեկամ ու զինակից, խորհրդային պառլամենտի անդամ, պետական ականավոր գործիչ: Թեև նա չտեսավ իր նաիրյան երկրի ազատագրությունն ու պայծառ վերածնունդը, բայց ջերմ ու անբեկանելի հավատով գրեց, որ փրկությունը հեղափոխական Ռուսաստանին միանալու մեջ է: «Բանվորական և գյուղացիական Ռուսաստանի սոցիալիստական կարմիր զնդերն են, որ պիտի մի գեղեցիկ օր եղբայրական ձեռք մեկնեն տանջված ու կեղեքված, մահացու վտանգի մեջ գտնվող հայ գյուղացուն ու բանվորին, միայն Ռուսաստանի բանվորական և գյուղացիական խորհուրդների իշխանության կարմիր զնդերն են, որ կարող կլինեն ազատություն ավետել արյունաներկ երկրին» («Երկերի ժողովածու», հատ. II, 1961, էջ 347—348):



Իրականացան համառուսական ԿԳԿ անդամ կոմունիստ բանաստեղծի բաղձանքներն ու կանխատեսումները: «Արյունաներկ երկիրը» ազատագրվեց զարավոր ճնշումից, ֆիզիկական լիակատար բնաջնջման ահավոր ու ունալ վրա անհից և դարձավ սոցիալիստական բարգավաճ հանրապետություն:

Հին խոսք է՝ արվեստի զեղեցկի նկատմամբ ժամանակն անգոր է: Անույալի մեծ արվեստագետներին ժամանակը չի հեռացնում մեզնից: Նրանք ժրխում են բնության հայտնի օրենքը, թե իրերը հեռվից փոքր են երևում: Այդ օրենքը վերաբերում է փոքր զրոյներին: Նրանք հեռվից իսկապես որ փոքր են երևում կամ բոլորովին չեն երևում: Ֆիզիկայի այդ օրենքը անգոր է դառնում, երբ խոսքը վերաբերում է Պուշկինին ու Տոլստոյին, Նարեկացուն ու Սայաթ-Նովային, Բումանյանին ու Տերյանին: Նրանց նկատմամբ թերևս իրավունքի մեջ է մտնում բնության այլ օրենք՝ երկնահաս լեռը իր ամբողջ վեհությունը մոտ Երաթությունից, ստորոտից չի երևում: Մարդու անցած ճանապարհը չի երևում նրա մի քանի քայլից, նրա կյանքի խաչուղուց: Ծանապարհը ձրգվում-նրկում է հեռավորությունից, լեռնազագաթից: Տերյանը հոկտեմբերյան օրերին վառեց իր սիրտը և այդ բոցավառումի լույսով պարզ երևաց նրա անցած ուղին՝ ծանր ու տանջալից, խանդակներով ու զիզազներով, բայց միշտ զուգահեռ պատմության մայրուղուն, միշտ առաջ ու վեր: Նրա մահվանից հետո անցած շուրջ կես դարը ոչ միայն Տերյանին չհեռացրեց մեզնից, այլև ավելի հարազատեցրեց, ցույց տվեց նրա պոեզիայի անանց հմայքը, ցույց տվեց, որ այն գործ չունի ժամանակի փոքր հատվածների հետ, որ այն մեր նախորդների մեզ ու հավերժի համար է սահմանված: Տերյանի պոեզիայի լավագույն մասը միշտ այժմեական ու անթառամ է մնալու և հավերժ ապրելու է մեր ժողովրդի հույզերի ու մտքերի աշխարհում:

Խմ գեղեզմանը բող լինի հեռվում,  
Բող ինձ չհիշե՛ք, բող ինձ մոռանա՛ն:

Այսպես է ասել Տերյանը մոռալ ու տխուր մի պահի: Ծակատագրի զարմանալի տնօրինությամբ նրա գերեզմանը հեռվում, սակայն չհիշելն ու մոռանալը հնարավոր բաներից չէին: Երևանում հայկական պոնթեոն պետք է սարքել, — վշտով, խորին ցավով ասել է Չարենցը, — նշանավոր հայերի աճյունները տեղափոխել այնտեղ: Տերյանին էլ հարկավոր է Օրենբուրգից բերել:

Իրականացել է Չարենցի ցանկության մեծ մասը. այժմ կա այդ պանթեոնը, այնտեղ են մեր մշակույթի անմահ գործիչներից շատերի աճյունները: Շուտով այնտեղ, Կոմիտասի ու Իսահակյանի հարեանությամբ, կհանդիպենք Տերյանի աճյունը: «Հայ ժողովրդին — Օրենբուրգի աշխատավորությունից», — այսպես է գրված Երևան հասած աճյունասփորի վրա: Պարզվում է, որ պոետի հիշատակը միշտ վառ է պահվել նաև Օրենբուրգում՝ նկարահանված է Տերյանին նվիրված ֆիլմ, տպագրվում է «Տերյանի հետքերով» գիրքը, դավառագիտական թանգարանում ստեղծված է հատուկ ստենդ, քաղաքի բարեկարգվող մայրուղիներից մեկը կոչվել է հայ բանաստեղծի անվամբ: Եվ ապա՝ հողվածներ, գեկուցումներ, զրույցներ, Տերյանին նվիրված գիտական սեսիա: Լեճյունասփորի հետ շնորհաձոներ են ուղարկված Հայաստանի կոմպարտիայի Կենտրոնական կոմիտեի, Գերագույն սովետի և Մինիստրների սովետի հասցեներով, Երևանից Օրենբուրգ են թռել հեռագրեր ու նամակներ՝ սիրելի բանաստեղծի հիշատակը այդպես վառ պահելու թանկագին առիթով: Լավ է աս-



ված սովետական դրոշմների միության գլխավոր քարտուղար Սուրկովի խոսքում՝ Տերյանի աճյունի Երևան տեղափոխելը ուս և հայ ժողովուրդների բարեկամության վառ օրինակներից է:

Այս ամենը ցույց է տալիս, որ մեծերը ամենուր զնահատում են, սիրելիների շրջանում լինում: Այդպիսի մեծերից է մեր Տերյանը, «Մթնշաղի» ու «Վերադարձի», «Ոսկի հեքիաթի» ու «Երկիր նաիրիի» անմահ հրդիչը. նա, որ կյանքի վերջում մխրձվեց աշխարհաստան մրրիկների մեջ, հրդեհ նոր օրերի վեհությունն ու շոինդը և բնկավ այդ նոր ճանապարհի սկզբում՝ դարերին թողնելով իր սրտահույզ ու հիասքանչ հրդր: Մեծ պոետը բնության տված հզոր ու շքեղ տաղանդով սպանեց բնության օրենքը՝ մահը և սկսեց իր Լրթր դեպի դարերը գալիք, դեպի հավերժություն:

#### ВААН ТЕРЬЯН

(К 80-летию со дня рождения)

Проф. В. З. ПАРТИЗУНИ

(Р е з ю м е)

Терьян является одним из самых народных, самых светлых и любимых представителей армянской литературы. Своим творчеством он ознаменовал новую ступень и открыл новый путь для развития отечественной литературы.

Характерными чертами поэзии Терьяна являются своеобразие и богатство духовного мира его лирического героя, единство его дум и чувств, высокая и тонкая поэтическая культура и безграничное расширение рамок выразительных возможностей нашего языка.

В новой армянской литературе Терьян выступает как крупнейший лирик. Его любовной лирике, как и всей поэзии, присущи тоска и грусть. Однако эта грусть не является скорбью слабой и подавленной души или болью от потери любимой действительности. Причина терьяновской грусти — горечь чувствительной и великой души за унижение человека, достойного всего наилучшего, за его беспросветную жизнь, во имя светлой мечты, счастья человека, справедливого общественного строя.

Терьян создал шедевры патриотических песен. В частности, цикл его стихов «Страна Наири», насыщенных удивительной глубиной чувств и высоким поэтическим мастерством, открыл новую блестящую страницу в истории армянской культуры.

Закономерная творческая эволюция привела Терьяна к Октябрю. Великий поэт нашел верный путь: скорбь своего народа он не противопоставил скорби других народов, а, наоборот, присоединил. Основу возрождения своего «пленного, но не ставшего рабом» народа, способного к орлиному полету, он видел в присоединении его неисчерпаемых духовных сил к общерусскому освободительному движению.

Творец интимных строк, Терьян был одним из первых, сочетавших поэтическое творчество с величием гражданского подвига. Он стал солдатом армии революции, другом и соратником Ленина и Шаумяна, членом советского парламента, крупным государственным деятелем. Завершив своим творчеством последнюю страницу армянской классической поэзии, Терьян стал одним из зачинателей и основоположников армянской советской и вообще советской поэзии. Лучшая часть его поэтического творчества, всегда актуальная и неувядаемая, будет вечно жить в мире чувств и мыслей нашего народа.